

ՎԱՀԱՆ ՉԱՆՈՅԱՆ. ԻՆՉՊԵ՞Ս ՎԵՐԱԳՏԱՅ ՉԻՆՔ ԵՒ Ո՞Վ Է ԱՆ

Posted on December 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Սովաքու ճիրանի, Մոսթրեալ, 28 Նոյեմբեր 2022

Երեւան, 2010, Ձմեռ

Հեռաձայնը հնչեց, ընկեր մըն էր.

--Ու՞ր ես, կրնա՞ս գալ:

--Հեռու եմ, չեմ կրնար գալ, ուշ է արդէն:

--Ուշ չէ, եկուր մեծ անակնկալ ունիմ քեզի:

--Վահրամի (Դաւթեան) հետ եմ, Ռուբէն Աբովեանի մօտ, որ Մերձաւան գիւղը կ'ապրի:

--Ո՞ր է ատիկա:

--Էջմիածնի ճանապարհին... :

--Շատ հեռու չէ, մենք կը սպասենք քեզի... եկուր... գոհ կը մնաս...

Գացի: Եւ իսկապէս անակնկալը մեծ էր: Հոն էր իմ մանկապատանեկան ընկերներէս՝ Վահան Չանոյեանը, որ երեսունէ աւելի տարիներ առաջ մեկնած էր ԱՄՆ ուսանելու, ու ատկէ ետք թեւ մամուլէն հետեւած էի իր մասնագիտական նուաճումներուն, բայց բնաւ չէինք հանդիպած: Հոն էր նաեւ իմ մանկապատանեկան ընկերներէս՝ Մարտիկ Չանչանեանին կրտսեր եղբայրը՝ Թոմիկը, որոնք յաջորդող տարիներուն նոյնպէս ԱՄՆ մեկնած էին: Մեր հաղիպումը թէ՛ Վահանի եւ թէ՛ Թոմիկի հետ չափազանց ջերմ էր եւ ... ինչ որ տեղ նաեւ՝ յուզիչ: Ինչե՛ր, ինչե՛ր պատմեցինք այն օրերէն, երբ Այնճարը խաղաղ էր ու մենք միասին որսի կ'երթայինք... գետը կը լողայինք, գիշերները պարտեզները կրակ կը վառէինք, օդը կը կրակէինք ու հոն կը քնանայինք...: Հաղիպման «փոթորիկը» խաղաղելէ ետք, երբ սեղանի շուրջ նստեցանք, Վահանը ըսաւ.



--Գիտե՞ս ինչպէս յիշեցինք քեզ:

--Ըսէ նայիմ:

--«Բագին»ներէն մէկուն մէջ էղիկ Բերդեանի ստեղծագործութիւնները տեսած էի ու հիացած: Յատկապէս մէկը՝ «Վերջին Թաւջուրակահարը» խորագրով նկար մըն էր, ուր ծերունի մը առանձին փողոցը նստած կը նուագէր: Երբ Գաբոյին հարց տուի թէ ու՞ր կրնայ ըլլալ այդ գեղեցիկ կտաւը, ըսաւ որ Մովսէսին քով ըլլալու է:

--Ճիշդ է, այդ նկարը քովս է:

--Կրնա՞մ տեսնել:

--Կրնաս ունենալ, հաշուէ որ քուկդ է արդէն: Ուրիշ բանի մը պէտք ունի՞ս, գուցէ նոր եկած ես Հայրենիք... :

--Ո՛չ, ես արդէն քանի մը տարիներէ ի վեր յաճախ հոս կու գամ: Փառք Աստուծոյ... ամէն ինչ կարգին է, կարելորդ զիրար գտանք: Բայց քեզի այլ հարց մը ալ ունիմ...

--Խնդրեմ...

--Կը յիշե՞ս չէ, «Բագին»ի շուրջ հաւաքուած «Գրական Խմբակ» մը ունէինք, դուն մօտ էիր Սնապեանի հետ ու երբեմն ներկայ կ'ըլլայիր մեր հանդիպումներուն:

--Ճիշդ է:

--Գեղեցիկ աղջիկ մը կար մեր մէջ, Էլօ անուևով, կը ճանչնա՞ս, ու՞ր է արդեօ՞ք հիմա...լուր ունի՞ս իրմէ...:

--Սպասէ՛, շատ առաջ մի՛ երթար, որովհետեւ այդ գեղեցկուհին տիկիկս է հիմա....

--Օ՛, ի՛նչ կ'ըսես, բախտաւոր մարդ ես եղեր, միայն սխալ մի հասկնար զիս, ես ամուսնացած եմ արդէն ու երկու տղայ ունիմ: Պարզապէս իր գեղեցկութեամբ աչքի կը զարներ, տպաւորուած էի... իրմով, կ'ուզէի տեսնել զինք:

--Հարց չկայ, ինք հոս է արդէն եւ այս քանի մը օրը կը տեսնուիկք:

Իմ հետաքրքրասէր ընթերցող, այդ օր Վահանը երկու յատկանշական դէպք պատմեց, որոնցմէ առաջինէն տեղեակ էի, իսկ երկրորդը՝ նորութիւն էր ինծի համար: Երկուքն ալ պիտի պատմեմ, բայց նախ՝ առաջինը.

Օր մը, իր հայրը՝ արաբագետ Բաբգէն Չանոյեանը, ամրան շաբաթավերջին գիւղ՝ Այնճար կ'ելլէ, կը տեսնէ որ իր միակ ուստրը՝ ինը տարեկան Վահանը նստած ինը աղջիկներու մէջ պուլարիկ կը հիւսէ: Վահանը չորս քոյր ուներ եւ հինգ հօրաքրոջ աղջիկներ: Ի՞նչ մեղքս պահեմ, բոլորն ալ վայելուչ էին եւ գիւղին մէջ ճանչցուած իբրեւ գեղեցկուհիներու գերդաստան: Հայրը տղուն դուրս կը հանէ աղջիկներուն մէջէն ու նոյն օրը Այնճարի մօտիկ քաղաքը՝ Չահլէ կը տանի ու որսորդական իսկական հրացան մը կը գնէ, կը նուիրէ իր տղուն ու կ'ըսէ.

--Դուն տղամարդ ես ու Մուսալեռցի, քու խաղալիքդ զէնքը պէտք է որ ըլլայ... գործ չունիս

աղջիկներու հետ:

Եւ որովհետեւ Բաբգէն Չանոյեանն ու հայրս՝ որսորդական ընկերներ էին (հայրս ինքնուս էր եւ արաբերէնը կը կատարելագործէր Չանոյեանի միջոցով...), մենք եւս նախ դարձանք որսորդ ընկերներ եւ ապա ժամանակի ընթացքին մտերմացանք: Իսկ գալով երկրորդ պարագային, Վահան պատմեց հետեւեալը.

—Երբ ներգաղթ կը կազմակերպուի 1948-ին, մեծ հայրս՝ Վահան Չանոյեանը, իր մօտիկ պարագաներուն եւ ազգականներուն կ'ըսէ. «Ես Հայաստան պիտի երթամ, բայց



պայման չէ որ դուք ալ գաք... Ես գիտեմ ո՛ր կ'երթամ: Կ'երթամ պարզապէս հայրենիքի մէջ մեռնելու ու հոն թաղուելու համար... : Վահան Չանոյանի մտքին մէջ շատ իւրահատուկ տագնապ մը՝ phobia մը կար, որ **օտարութեան մէջ մեռնելու եւ թաղուելու վախն էր...** Ամբողջ կեանքը արքորի մէջ անցուցած էր...

Երեք Վահան Չանոյեանը,
ծախի՞ն Բաբգէնը իսկ աջին՝ Մարին

Վահան լռեց... իսկ ես հետաքրքրութենէ մղուած խնդրեցի որ շարունակէ.

Օսմանեան բանակի մէջ սպայ եղած էր... իբրեւ վարպետ դերձակ: Ընտանիքին գրեթէ

բոլոր անդամները գոհ զացած են ցեղասպանութեան: Երբ բանակին մէջ հայ զինուորականները սկսած են ձերբակալել ու գնդակահարել, ինք փախած է...: Իմանալով որ զինք կը փնտռեն, ազգանունը փոխած է ու Տողանեանը եղած է Չանոյեան: Ճամբայ ելած է Սեբաստիոոյ Կեմերէք գիւղէն, գիշերները քալելով եւ ցերեկները պահուղտելով ի վերջոյ հասած է Սուրիոյ սահմանը, ուր յանձնուած է Անգլիական զինուժին: Անգլիացիք այդ օրերուն փախստական հայ զինուորները կը դրկէին Փորթ Սաիտ, ուր վրաններու տակ կը մնար Մուսա Լերան ժողովուրդը: Այսպիսով, Վահան Չանոյեանը 1918-ին կը միանայ Մուսա Լերան հերոսամարտէն վերապրած ժողովուրդին: Հոն կը հանդիպի Իսկուհի Ճամպագեանին, եւ կ'ամուսնանան: Երբ 1919-ին Ա. պատերազմը կ'աւարտի եւ Ֆրանսացիք Մուսա Լերան ժողովուրդը կը վերադարձնեն Մուսա Լեռ, մեծ մայրս` Իսկուհին յի եղած է: Մուսա Լերան իրենց պապենական տունը վերադառնալէն անմիջապէս յետոյ` հայրս, Բաբգէնը կը ծնի 1919-ի Օգոստոսին: 1939-ին Մոսալեռացիներու հետ կը փոխադրուի Այնճար... ա՛լ յոգնած էր ու կը վախնար օտար երկինքի տակ վերջին շունչը փչելէ: Ա՛յդ էր հայրենադարձութեան իր հիմնական դրդապատճառը: Աղջիկներէն երեքը եւ մէկ տղան, Սերոբը, իրենց հօր կը հետեւին իսկ չորրորդ աղջիկը` Մարին եւ մեծ տղան` Բաբգէնը կը մնան Այնճար: Կ'երթայ... «Խերով-բարով» կը հասնի հայրենիք, սակայն շատ չանցած, իբրեւ յեղափոխական, իբրեւ «ժողովուրդի թշնամի», կը կալանաւորուի ու Սիպիր կ'աքսորուի... ուր կը մահանայ 1954-ին: Բայց մարմինը կը նետեն հասարակած-մասսայական փոսի մը մէջ: Թաղուած տեղը անյայտ կը նմայ...: Եւ հակառակ իմ լուրջ ու հետեւողական որոնումներուն, ոչ մէկ լուր ունիմ իրմէ... :

Եւ այսպէս հայրենի հողի մէջ յաւիտեանս ննջելու, այս իրաւ հայուն իղծը կը մնայ առկախ, որու հետքն իսկ գոյութիւն չունի... ցայսօր :

Սակայն,

Վահանը իր մեծ հօր ու անոր գերդաստանի յիշատակը յաւերժացնելու համար պատմա-մշակութային նշանակութիւն ունեցող յուշարձան-խաչքար մը գետեղեց Վարդահովիտի իր առանձնատան բակը` բնութեան մէջ` իր սարքած արհեստական լճակին կողքին: Խաչը երիզուած է Հայ ժողովուրդի ամենայատկանշական սրբութիւններով ու հերոսներով, սկսեալ Հայկ Նահապետէն, Վահագնէն ու Անահիտէն, մինչեւ Մեսրոպ

Մաշտոցը, Սասունցի Դավիթն ու Արամ

Մանուկեանը: Խաչին վրայ՝ դրոշմուած է, մեր ազգային սրբութիւն-սրբոց «Է» տարը, որ դրուած կ'ըլլայ հայկական եկեղեցիներու խորաններու ամենասուրբ տեղը՝ ճակատին, իբրեւ աստուածային եութեան, տիեզերական յաւերժական ԼՈՅՍ-ի խորհրդանշան: Երկու կողմերը փորագրուած են Վահան եւ Իսկուհի, Բաբգէն եւ Մարի Չանոյեաններու անունները, որոնք հետագային կրնան համալրուիլ իրենց անուններով: Մոռցուած չէ նաեւ իր կողակիցը՝ Շարլոթը, որուն ի պատիւ խաչքարի աջ կողմի վարը պատկերուած են երկիրն ու առհասարակ կեանքը պաշտպանող Կելտական զոյգ դիւցազունները: Ի դէպ, այս արժանաւոր տիկինը ոչ միայն հայերէն սորված է, այլեւ երկու երիտասարդ՝ (Շահան եւ Վարանդ) մեծցուցած է, որոնք մաքուր հայերէն կը խօսին, կը գրեն ու կը կարդան, նոյնիսկ Արեւելահայերէնի յատուկ դասընթացքներու կը հետեւին, որպէս զի ամառները, երբ հայրենիք գան (բարեսիրական նպատակներով), կարողանան բնական կերպով հաղորդակցիլ տեղուոյն երիտասարդ երիտասարդուհիներու հետ:



Վայոց ձոր, 2019, 24 Հոկտ.

Նստած էինք Վահանի Վարդահովիտի առանձնատան բակը, իր ազգականներէն Արտակ Տօնիկեանի եւ իրաւապաշտպան՝ Աւետիք Իշխանեանի հետ: Բնութիւնը դիւթիչ էր ու հրաշափառ: Վեհանիստ արեգակը օրուայ վերջին ճառագայթներով կ'օծեր մեր սեղանն ու կ'օրհներ մեր բարձր տրամադրութիւնը...: Չրոյցի ընթացքին Աւիկը հարց տուաւ.

--Վահան ջան՝ ո՞նց ես գտել բնութեան այս հրաշալիքը:

--Պատահաբար: Ընկերներով որսի էինք եկել այս կողմերը, ճիշդ այս ծառի դիմացից մի խումբ կաքաւներ թռան, ես որոշեցի իմ հանգստատունս այստեղ կառուցել: Եթէ մեծ

հայրս բախտը չունեցաւ հայրենի հողի մէջ իր վերջին կայքը գտնելու... յաւիտեանս, յոյս ունեմ որ ես նոյն դժիւեմ ճակատագրին չեմ արժանանայ... :

Որպէսզի Աւիկը ճիշդ ընկալէ Վահանի որոշումն ու իղծը, ըսի.

--Վահանը տարուայ մեծ մասը անցկացնում է այս ամայքների մէջ: Այստեղից ընդամենը մի քիլոմէթր հեռաւորութեան վրայ է Վարդահովիտ գիւղը, որ մեծապէս «օգտուեց» եւ շարունակում է օգտուել Վահանի ներկայութեանից: Չեմ ուզում մանրամասնել... պարզապէս նրա համեստութիւնը չվիրաւորելու համար... յետոյ քեզ բացատրելու եմ... միայն պէտք է ասեմ, որ նա իր առանձնատունը չկառուցեց Երեւանի մօտիկ ինչ որ տեղ... այլ ուղղակի սահմանի վրայ, Քելլաճարի հանդիպակաց կողմը :

--Հրաշալի է: Վայրի գազաններ չկա՞ն...

Վահանը բացատրեց.

--Կա՛ն: Նոյնիսկ մի օր, դեռ արեւը չծագած, ինչ որ ձայներ լսեցի... արթնացայ ու ի՛նչ տեսնեմ: Մի արջ իր երկու քոթոթների հետ եկել էր... ա՛յ... այդ ծառերից վայրի տանձ էր ուտում: Աւիկ ջան՝ միայն այստեղ կարելի է նման բացառիկ երեւոյթի հանդիպել... սա հրաշք է... չէ՞...:

--Բայց չէ՞ք վախենում...:

--Վախը ո՞րն է Աւիկ ջան, երբ որոշել էի այս բնակարանը կառուցել, ճարտարապետին ասացի որ, «ես Մուսալեռցի եմ, այս տանը մէջ գրադարանի կողքին ուզում եմ ունենալ նաե՛ւ զինադարան»: Իմ պապերս եւ հայրս միաժամանակ թե՛ զէնքի եւ թե՛ մշակոյթի մարդիկ են եղել: **Մշակոյթ եւ Ուժ**: Նկատի առ, որ մենք Մուսալեռցիներս հաւատում ենք թե՛ մշակոյթին եւ թե՛ ուժին: Միայն թէ սխալ չհասկանանք: Ուժ ասելով մենք զէնքին զուգահեռ հասկանում ենք նաեւ թե՛ գիտութիւնը, թե՛ տնտեսութիւնը, թե՛ կրթութիւնը եւ թե՛ առհասարակ մշակոյթը...: Այս հաւատքն է որ Մուսալեռան ծերպերում մեզ պահել է... հազարաւոր տարիներ...:



Փոքրիկ Վահանը Այնճարի մեջ՝ Այս լուսանկարը իր հայրը մկրտած է «Երեք Հորթուկները»

Այո՛, իմ հաւտարիմ ընթերցող՝

Հակառակ անոր, որ Վահանը մասնագիտութեամբ տնտեսագետ է ու շօշափելի նուաճումներ արձանագրած միջազգային հարթակներու վրայ, ան բանաստեղծ ու գրող է նաեւ: Հրատարակած է բանաստեղծութեան երկու հաւաքածոյ հայերէն լեզուով եւ չորս վեպ անգլերէնով, որոնցմէ մէկը՝ «Սրբազան Աւազուտքներ» (The Sacred Sands), որ Արեւմտեան կարգ մը համալսարաններու մէջ որդեգրուած է իբրեւ լրացուցիչ դասագիրք: Անոր գրական վաստակը գնահատելու ու արժեւորելու տեղը չէ հոս... ցոյց տալու համար իր վիպագիրի տաղանդն ու գրական վաստակը, հարկաւոր է առանձինս անդրադառնալ...:

Մուտքի նկարը՝ ձախէն աջ՝ Մ. Հեկելեան, Վ. Չանոյեան, Ա. Իշխանեան եւ Ա. Տօնիկեան. Վարդահովիտ, 2019, Հոկտմ. 27-ին

There are no comments yet.